«ԿԱՋԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
"KASA" FONDATION HUMANITAIRE SUISSE
Komitas Action Suisse-Arménie
Թումանյան 24, բն. 5, 0001 Երևան Հայաստան
24, rue Toumanian, apt.5, 0001 Erévan Arménie
☎ (37410) 58 40 32 E-mail: kassam@kasa.am / www.kasa.am

ՀՐԱՎԵՐ «20» ապրիլի, 2017թ.

## ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

«ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, որը գտնվում է ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեում վարսահարդարման և մատնահարդարման պարագաների գնման նպատակով կազմակերպում է մրցույթ:

Ծառայությունների գնումը ֆինանսավորվելու է «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամին ՄԱԿ ՓԳՀ-ից դրամաշնորհի ձևով հատկացված միջոցների հաշվին:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ, ք. Երևանում գործունեություն ծավալող անձինք՝ անկախ նրանց իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մրցույթի առարկա են հանդիսանում մատնահարդարման և վարսահարդարման պարագաները (ցանկը տե՛ս տեխնիկական առաջադրանքում)

**Ուշադրություն՝** «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսավորմամբ կատարված ցանկացած ծառայության մատուցում պետք է ազատված լինի ուղղակի և անուղղակի հարկումից, ինչպես օրինակ՝ ԱԱՀ (Ավելացված Արժեքի Հարկ):

Ծառայությունների մատուցման ժամկետը հաղթող մասնակցի հետ պայմանագիրը ստորագրելուց հետո մինչև 2017թ.մայիս 31-ն ընկած ժամանակահատվածն է:

Նույն մասնակցի կողմից մի քանի գնային առաջարկ ներկայացնել չի թույլատրվում:

Մրցույթի հաղթողը կորոշվի հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո 4 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի՝ (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստում ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեով:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեով (սեղմելով մուտքի դռան 5B կոճակը), մինչև **2017թ. ապրիլ 27-ի ժամը 17$^{00}$-ը** և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Ուշադրություն՝ հիմնադրամի ոչ աշխատանքային օրերն են համարվում յուրաքանչյուր կիրակի և երկուշաբթի օրերը:

Փաստաթղթերը դրվում են դրվում է ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից:

Ծրարը և դրանում ներառված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող մասնակիցը կամ վերջինիս կողմից լիազորված անձը:

Ծրարի վրա նշվում են՝

ա) մրցույթի կազմակերպիչի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

գ) մասնակցի կոնտակտային անձի էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը,

Հայտերի բացման նիստում հանձնաժողովը գնահատում է՝

ա) հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սույն հրավերով սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը.

բ) բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթի(երի) առկայությունը.

գ) յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սույն հրավերով սահմանված պայմաններին:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ որակյալ ապրանքի գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Պայմանագիր կնքելու մասին որոշումը պատվիրատուն հայտարարում է մրցույթում հաղթած մասնակցին այդ մասին էլեկտրոնային նամակով կամ հեռախոսով տեղեկացնելու միջոցով:

Հանձնաժողովի նախագահ՝

Տնօրեն Ա. Մինասյան

Հանձաժողովի անդամներ՝

Հաշվապահ Հ. Թազվորյան

Ծրագրի պատասխանատու Մ. Թունյան

Վարչական գծով տնօրեն Մ. Սարգսյան